

ղափառքն քահանայից ուղղափառաց, եւ միսիօնարաց, որ ի գալն նոցին ի ժամն հայոց ոչ ուղղափառաց, քարոզս տայցեն, կամ ուղղափառապէս առնիցեն զժամերգութիւնս, եւ զպատարագս մատուցանիցեն. զի զայս անհնարինս երեւի մեզ, միայն թէ Աստուծոյ յատուկ ողորմութեանն կարօտի, որ զայս այսպէս գիտակ լերուք. եւ կամք ձեր հրամանոցն է:

Վասն տգեղութեան գրոյս, եւ անյարմար գրուածոյս ներումն խնդրի. վասն զի միտ մեր եւ տեսողութիւնք աչաց մերոց նուազեցեալ, եւ զայսչափս հազիւ հազ կարացեալ, զի ամք աւուրց կենաց մերոց ի չափն հասեալ, որ ի թիւն եօթանասուն եւ չորս եղբւն լնանեցեալ:

*Սիրելոյդ մերոյ Տեսունդ Տեսունդ Ստեփաննոսի Գեղասպաճատիդ ընծայի ողջոյն, ողջ ընր:*

Որովհետեւ հարկաւոր է, զի ամենայն ոք ճանաչիցէ զչափ անձին, վասն որոյ ահայ յայտ առնեմք ձերում գերապայծառութեանն, որ ահա՛ հասին առ մեզ գիր գրեցեալն յօգոստ. 22ին, ուստի եւ մեր ընթերցեալ ծանեաք զմիտ գրուածոյն, որք էին նիւթք նրբագոյնք: Վասն որոյ ի միտ ամեալ արժան վարկաք խոստովանիլ զտկարութիւն, եւ զանկարութիւնս մեր առ բանս ձեռնամուխ լինելն. որոյ պատճառն է, զի միտք մեր խելացնդեալ, որ զայս առաւել վասն մերոյ տկարութեան, որ ի յամենայն կողմանէ, որպէս որ յայտ է: Միայն թէ զայսքանս կարացաք տալ զտեղեկութիւնս ըստ մերոյ կարողութեան զի մեք այժմ՝ այսչափս միայն գիտեմք, որ մեք զմեզ ունիմք ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյ եւ ընդ հովանեաւ սրբոյ ժողովոյն, եւ ընդ պաշտպանութեամբ նորին, եւ նստեալ լռիկ միայն ի տան մերում, աղօթողս լինել վասն հաստատութեան նորին, եւ վասն խաղաղութեան ա-